HTML ձևեր

<form> թեգը

<form> թեգը նախատեսված է Web էջի վրա ֆորմա տեղադրելու համար:Այն նախատեսված է սերվերի և օգտագործողի միջև տվյալներ փոխանցելու համար:

HTML ձևերի միջոցով օգտագործողը սկրիպտների միջոցով կարող է նաև ստանալ որոշակի առավելություններ,որոնք ընձեռված չեն սովորական օգտագործողներին:

Web էջը կարող է ունենալ ցանկացած քանակությամբ HTML ձևեր, սակայն միաժամանակ չեն կարող ուղարկվել սերվեր 1-ից ավել ֆորմաներ,այդ պատճառով բոլոր ֆորմաները լինում են իրարից անկախ:

Տվյալները սերվեր ուղարկվում են Submit կոճակի օգնությամբ , որը դրվում է <input> թեգի միջոցով:

Երբ HTML ձևը ուղարկվում է սերվեր,տվյալների հետ աշխատանքը կատարվում է ծրագրով,որը ֆորմային կապում ենք action ատրիբուտի միջոցով:

HTML ձևերի ատրիբուտներից մի քանիսը

- Name-Այս ատրիբուտի միջոցով ֆորային տրվում է ունիկալ անուն, որը թույլ է տալիս նրա հետ սկրիպտներով աշխատել:
- Accept-charset-Սահմանում է կոդավորումը,որով սերվերը պետք է ընդունի և մշակի տվյալները (օր.՝ Windows-1251, UTF-8 և այլն)
- Action-Այս ատրիբուտի միջոցով ցույց է տրվում այն ծրագիրը,որը կոդավորում է տվյալները և ուղարկում սերվեր,իրեն հարմար տարբերակով:
- Target-Այն բանից հետո,երբ տվյալները ստացվում են,արդյունքը տրվում է HTML փաստաթղթի տեսքով:Այս ատրիբուտով կարելի է ընտրել,թե որ էջում լինի վերջնական արդյունքը:

HTML ձևերում ամենահաճախ օգտագործվող տարրը <input>-ն է:Այս տարրը օգտագործվում է տեքստային,գաղտնագրային դաշտեր, կոճակներ, անջատիչներ, դրոշակներ, փակ դաշտեր ստեղծելու համար:

Ինչպես նշվեց տվյալները սերվեր ուղարկելու համար օգտագործում են submit կոճակը,որը տրվում է <input>-ի type հատկանիշում:

Եթե Web էջի վրա կա միայն մի HTML ձև,ապա դա կարելի է իրականացնել նաև Enter ստեղնի միջոցով:

<Input>-ի ատրիբուտներից են՝

- Checked-լռելյան անջատիչ կամ դրոշակ ակտիվացնելու միջոց
- Disabled-դաշտը դարձնում է պասիվ,արգելում փոփոխել
- Autofocus-դաշտը գտնվում է ֆոկուսում
- List-բերվում է տեքստի հնարավոր տարբերակները,որոնցից կարելի է ընտրել
- Maxlenght-դաշտում մուտքագրվող մաքսիմալ տեքստի երկարությունը

<Input>-ի ատրիբուտներից են՝

- Max-թվի վերին շեմը
- Min -թվի ներքին շեմը
- Name-ունիկալ անուն,նրան ճանաչելու և նրա հետ աշխատելու համար
- Size-տեքստային դաշտի լայնությունը
- Src-գրաֆիկական պատկերի ճանապարհը,նկարով դաշտի համար
- Type-բրաուզերին հաղորդում է էլեմենտի տիպը
- Value-էլեմենտի արժեքը

<Input>-ի ամենահաճախ օգտագործվող ատրիբուտը Type-ն է:

Type-ը պարտադիր ատրիբուտ է:

Այն ընդունում է հետևյալ արժեքներից որևէ մեկը՝

Button-կոճակ

Checkbox-դրոշակ

File-սերվեր գնացող տվյալներին ֆայլ ավելացնելու համար

Hidden-չի երևում Web էջի վրա

Image-գրաֆիկական պատկերով կոճակ,որի սեղմման ժամանակ ֆորմայի պարունակությունը ուղարկվում է սերվեր

Password-գաղտնաբառի համար նախատեսված
Radio-անջատիչ
Reset-ֆորման բերում է լռելյան վիճակի
Submit-տվյալները սերվեր ուղարկելու կոճակ
Text-տեքստային դաշտ
Color-գույնի ընտրում
Date-ամիս-ամսաթվի դաշտ
Email-էլ. Հասցեի դաշտ
Number-թվային դաշտ
Tel-հեռախոսահամարների դաշտ
Time-ժամանակի համար նախատեսված դաշտ
url-Web հասցեների դաշտ

Շնորհակալություն